ՀԻԾԱՏԱԿԻ ՀՈԳԵՃԱԾ՝ ՎԱՍՆ ՀՈԳՎՈ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի թաղման կարգից հետո, Երևանի «Արմենիա» հյուրանոցի մեծ ճաշասրահում տրվեց հոգեճաշ՝ ի հարգանս հոգելույս Ամենայն Հայոց Հայրապետի:

Հոգեճաշին ներկա էին ՀՀ նախագահ պրն. Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ պրն. Բաբկեն Արարքցյանը, ՀՀ փոխնախագահ պրն. Գագիկ Հարությունյանը, Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը, Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահ, Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Կ. Պոլսո հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Իլիա Բ-ն, Մայր Աթոռի միաբանությունը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ազգային-եկեղեցական գործիչներ և այլ հյուրեր:

Գարեգին Բ Կաթողիկոսի կողմից սեղանի օրհնությունից հետո, բացման խոսքով հանդես է գալիս հոգեճաշի խոսնակ Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը.

«Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարք-Կաթողիկոս Համայն Վրաստանի,
Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո,
Հայաստանի Հանրապետության նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյան,
Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք հայոց Երուսաղեմի և Տեղապահ Ամենայն Հայոց Կաթողիկոսության,
Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարք Հայոց Կ. Պոլսի,
Մեծարգո ներկայացուցիչներ քույր Եկեղեցիների,
Հարգարժան ներկայացուցիչներ Հայաստանի պետական և քաղաքային իշխանության,
Հայաստանում հավատարմագրված մեծարգո դեսպաններ,
Հոգևոր եղբայրներ,
Տիկնայք և պարոնայք,

Միայն մի քանի ժամ առաջ հողին հանձնեցինք Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անշնչացած մարմինը: Սգավոր է հայ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, սգավոր է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Սգավոր են Հայաստանի Հանրապետության իշխանությունները, սգավոր է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր ողջ միաբանությամբ, սգավոր է նաև Հայ Եկեղեցու հոգևոր դասը իր բոլոր ապասավորներով, որովհետև Հայաստանյայց Եկեղեցու 130-րդ Հայրապետը, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, իր կյանքի 86-րդ և իր Հայրապետության 39-րդ տարում, առհավետ փակեց իր աչքերը՝ հրաժեշտ տալով երկրային կյանքին:

Այս առթիվ մենք մեզ մխիթարված ենք զգում, որ մեր վիշտը կիսելու համար Հայաստան են եկել քրիստոնյա քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Իրանի Իսլամական Հանրապետության կողմից հատուկ ուղարկված կրոնավորներ, հարևան երկրների պետական ներկայացուցիչներ, դեսպան

պաններ, հյուպատոսներ և այլ պաշտոնական անձինք: Բոլորին հայտնում ենք մեր խորագոյն շնորհակալությունը:

Նորոգ հանգուցյալ Վեհափառ Հայրապետի հոգու խաղաղության համար տրված այս հոգեճաշի սեղանը հայտարարում ենք բացված և հրավիրում ենք Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Տիար Բաբկեն Արարքցյանին՝ հանուն Հայաստանի պետական իշխանության ասելու իր խոսքը»:

Այնուհետև Գերաշնորհ Սրբազան Հոր հրավերով, հանուն Հայաստանի Հանրապետության կառավարության և իշխանությունների, ցավակցական սրտի խոսք ասաց ՀՀ Խորհրդարանի նախագահ պրն. Բաբկեն Արարքցյանը.

«Սգո արարողության հարգելի մասնակիցներ,

Այսօր հողին հանձնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի մարմինը: Աշխարհի բոլոր ծայրերում բնակվող հայերի համար այս օրը սուգ է: Հայաստանի Հանրապետությունում պետականորեն է հայտարարված սուգը: Պետք է իմաստավորվի Վեհափառ Հայրապետի դերը մեր ժողովրդի պատմության էջերում: Անգնահատելի է նրա ավանդը նաև մեր անկախ պետականության կայացման գործում: Վեհափառ Հայրապետի օրհնությամբ 1990 թ. հուլիսին իր աշխատանքներն սկսեց առաջին անգամ ժողովրդավարական հիմունքներով ընտրված Հայաստանի Հանրապետության խորհրդարանը: 1991 թվականի սեպտեմբերի 23-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը, և խորհրդարանի հատուկ նիստում Վեհափառ Հայրապետն առաջինը ողջունեց և օրհնեց մեր նորաստեղծ հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության առաջին նախագահը սկսեց իր գործունեությունը 1991 թվականի նոյեմբերին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ: Վստահ կարող եմ ասել, որ Վեհափառ Հայրապետը Հայաստանի Հանրապետության հիմնադիրներից է և Հայաստանի Հանրապետության առաջին հերոսը, մի իրողություն, որն ունի շատ խորը իմաստ և բովանդակություն:

Սգո արարողության հարգելի մասնակիցներ, Հայաստանի Հանրապետության նախագահի, խորհրդարանի, կառավարության և մեր ամբողջ աշխարհասփյուռ ժողովրդի անունից շնորհակալություն եմ հայտնում աշխարհի բոլոր ծայրերից ժամանած պատվիրակությունների անդամներին, որոնք կիսեցին մեր վիշտը, և մենք մեկ անգամ ևս համոզվեցինք, որ Վեհափառ Հայրապետի հեղինակությունը, համբավը և հմայքը դուրս է եկել ազգային շրջանակներից և տարածում գտել ամբողջ աշխարհում:

Կրկնելով Վեհափառ Հայրապետի մի առիթով արծարծած միտքը, կարող եմ ասել. հազար ափսոս, որ նա հեռացավ մեզանից, բայց երբևէ կլինեն նրանք, ում կմիանար նա: Շնորհակալություն»:

Հանուն Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն Բարթողոմեոսի, խոսք ասաց պատրիարքության ներկայացուցիչ միտրոպոլիտ Դամասկինոսը.

«Սրբազան պարտականություն ունեմ Ս. Էջմիածնի Կաթողիկոսական Տեղապահ, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկ-

յանին, Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին և Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու հոգևորականությանն ու ժողովրդին փոխանցել սրտագին ցավակցությունները Նորին Վեհափառություն Տիեզերական Պատրիարք Տ. Տ. Բարդուղիմեոսի և Սուրբ Սինոդի:

Տիեզերական Պատրիարքությունը և Հայ Եկեղեցին իրենց բազմադարյա ավանդությամբ և ընդհանուր պատմական ճակատագրով փոխադարձ կապերով կապված են եղել և կապված կմնան հետայսու թե՛ ուրախության, թե՛ սուգի առիթով, թե՛ Խաչի և թե՛ Հարության ժամանակ:

Երջանկահիշատակ Կաթողիկոս Վազգեն Ա-ն, որը պատմության մեջ կմնա իբրև Հայ Եկեղեցու իմաստուն առաջնորդը, ճանաչված և գնահատված էր նաև թե՛ Ուղղափառ և թե՛ ընդհանուր եկեղեցական շրջանակների կողմից: Հետևաբար Ձեր Եկեղեցու, Ձեր պետության և Ձեր ժողովրդի սուգը միաժամանակ նաև համաուղղափառ և համաքրիստոնեական սուգ է:

Երջանկահիշատակ Կաթողիկոսին անձնապես մոտիկից ծանոթանալու պատիվն եմ ունեցել թե՛ իր՝ Շամբեզի՝ Տիեզերական Պատրիարքության էկումենիկ կենտրոն կատարած այցելությունների և թե՛ իմ՝ Էջմիածին ժամանման առիթներով: Հատուկ ակնածանքով և կարոտով եմ հիշում մեր վերջին հանդիպումը Ս. Էջմիածնում 1985 թ., երբ եկել էի իբրև ներկայացուցիչը Տիեզերական Պատրիարքության, մեր Եկեղեցիների միջև պաշտոնական դիալոգին մասնակցելու համար: Նա լավատես էր այդ դիալոգի նկատմամբ: Այս պահիս հիշում եմ իր դիտողությունը. «Մեր երկու եկեղեցական ընտանիքները փոխանցողն ու շարունակողն են առաքելական միևնույն հավատքի, մեկ, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցու: Մենք պարտականություն ունենք վերականգնելու սրբազան հաղորդակցությունը՝ պայմանով, որ ապահովվեն յուրահատկությունները ազգայինկրոնական տեղական ավանդությունների, որոնք ոչ միայն չեն վնասում մեր հավատին, այլ ընդհակառակն, հարստացնում են մեր հավատքի և սիրո հաղորդակցությունը»:

Երջանկահիշատակ Հայրապետը այն ժամանակ ցանկություն արտահայտեց, որ հայերենի թարգմանվի և հրատարակվի իմ դոկտորական թեզը, հրատարակված 1966 թ. «Հայ Եկեղեցու հիմնադրումը և զարգացումը մինչև Դ Տիեզերական ժողովը» վերնագրով: Կաթողիկոսի այդ ցանկությունը իրականացավ երկու ամիս առաջ միայն՝ Հայր Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանի թարգմանությամբ և Վիգեն Սրբազանի ու իր ընկերների նվիրատվությամբ: Հայերեն այս հրատարակությունը համարում ենք մի աղոթք երջանկահիշատակ Հայրապետի հիշատակին: Ամեն»:

Ապա Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն Ալեքսեյ Բ-ի ցավակցական խոսքը ընթերցեց Վոլոկալամսկի և Յուրևի միտրոպոլիտ Պիտիրիմը.

«Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի մեծարգո անդամներ, Գերաշնորհ հայրեր, Արժանապատիվ հոգևոր հայրեր և Հայ Առաքելական Եկեղեցու Աստվածասեր հավատավորներ:

Հանուն Ռուս Պրավոսլավ Եկեղեցու, Վոլոկալամսկի և Յուրևի միտրոպոլիտ Գերաշնորհ Պիտիրիմի միջոցով, աշխարհի տարբեր ծայրերից իրենց սիրելի Հորը և երջանկահիշատակ Հովվապետին վերջին ճանապարհը ուղեկցելու համար ժամանած բարձրաստիճան հոգևորականներին, հոգևոր

սպասավորներին և հավատացյալ ողջ հայ ժողովրդին Ձեր ունեցած մ ծ կորստի առթիվ հղում ենք մեր խորին ցավակցությունները:

Լուսավոր զգացումներով և լի համակրությամբ առ երջանկահիշատակ Կաթողիկոսը, որ շուրջ 39 տարիներ իմաստուն կերպով ղեկավարեց Ձեր Սուրբ Եկեղեցին՝ դառնալով նրա նվիրումի և սիրո խորհրդանիշը, մենք այժմ վերհիշում ենք եկեղեցական և քաղաքական խիզախումներով լի Նորին Սրբության այն բազում գործերը, որ զարդարում են այժմ հին և փառավոր Առաքելական Եկեղեցին:

Հիմա մենք հրաժեշտ ենք տալիս բացառիկ շնորհների տեր մի անձնավորության՝ ողջ աշխարհում սփռված հայության հոգևոր դաստիարակին ու հորը, Հայաստանի Հանրապետության ազգային հերոսին, որը թե՛ եկեղեցական կյանքում, թե՛ մեզ բոլորիս հայտնի, բազմաչարչար հայ ժողովրդին բաժին ընկած պատմական փոփոխությունների և ծանր փորձությունների ճանապարհին չխնայեց իր ուժերը:

Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հավատացյալները երբեք չեն մոռանա նորոգ հանգուցյալ Հայրապետի՝ քրիստոնյա աշխարհի խաղաղարար գործունեության ճանապարհին կատարած լուրջ ներդրումները և այն օգտակար աշխատանքը, որ նա կատարեց 1977 և 1982 թվականներին Մոսկվայում կայացած կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերանսների ժամանակ:

Մեր սրտերում մենք վառ կպահենք երջանկահիշատակ Հայրապետի կերպարը, մարդ, որ շատ բան արեց Հայ Առաքելական և Ռուս Պրավոսլավ Եկեղեցիների միջև բարեկամության ամրապնդման գործում:

Վերջինս, ըստ արժանվույն գնահատելով այդ գործում Նորին Սուրբ Օծության կատարած ներդրումները, պարգևատրեց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին իր բարձրաստիճան եկեղեցական շքանշաններով:

Եվ այժմ, մտովի խոնարհվելով նորոգ հանգուցյալ, Ծայրագույն Պատրիարքի և Կաթողիկոսի շիրմի առջև, Ձեզ հետ միասին վերհիշում ենք այն փառավոր հովվապետական ճանապարհը, որ նա իր ժողովրդի հետ միասին գնում է դեպի Քրիստոս:

Մենք վեր ենք առաքում մեր ջերմ ու անընդմեջ աղոթքն առ «Տերն կենդանեաց և մեռելոց» Հիսուս Քրիստոս, որ Նա իր Երկնավոր օթևաններում ի հանգիստ ընդունի երանաշնորհ Հայրապետին, ուր «Ոչ գոյ հիւանդութիւն կամ տխրութիւն, այլ՝ կեանք յաւիտենական»:

Հավերժ հիշատակ նորոգ հանգուցյալին, իսկ Ձեզ բոլորիդ Պողոս Առաքյալի հետ միասին ասում եմ. «Մի տխրեք ուրիշների նման, որ չունեն հույս ու նեցուկ», հավատացեք, Մեծ Հովվապետը, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, կտա Ձեզ արժանի ժառանգորդ ու հովիվ, որ կառաջնորդի Ձեր Սուրբ Եկեղեցու Աստվածասեր զավակներին դեպի Երկնավոր Արքայության փրկարար նավահանգիստ:

ԱԼԵՔՍԻ Բ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ

26 օգոստոսի 1994 թ.»

Այնուհետև ցավակցական խոսք ասաց Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը.

«Վեհամաշուք նախագահ, Վեհափառ Տեր, Ամենապատիվ Սրբազան Հայր,

Պատմությունը պետք է գրե երջանկահիշատակ Վազգեն Կաթողիկոսի այն բոլոր գործերը, որ 39 տարիներու մեջ իրականացուցեց. կառույցներ, գնահատականներ արվեստագետներու հետ, ի վերջո մեր մշակույթի բոլոր ճյուղերը սպասարկողներուն հանդեպ Հայրապետը ժողովրդական դարձուց: Նախքան հոգևորական դառնալը, ի հայտ բերեց իր ժողովրդին երազը, իր՝ Խրիմյան Հայրիկի վերլուծումովը, Մուսալեռան 40 օրերու վերլուծումովը: Տակավին հոգևորական չեղած, ի հայտ կբերեր հայրենասեր մարդը: Հայ հոգևորական եթե կհագնի իր աքեմը հանուն կրոնքին՝ շատեր կան, որոնք կրնան այդ կյանքը ապրիլ, սակայն ամեն հայ հոգևորական կհագնի իր աքեմը ծառայելու իր ժողովրդին: Վազգեն Կաթողիկոս այս կերպով ավելի հատկանշական դեմքը եղավ: Առաջին անգամ իր Կաթողիկոս ըլլալեն տասկավին հինգ ամիսներեն վերջ՝ նախ Լիբանան, Եգիպտոս և ապա Եվրոպա այցելություններ ունեցավ, սակայն զգաց, որ արտասահման ժողովուրդ մը կա, որ վախով չէր մոտենար հայրենի ճշմարտությանը: Հայրենիքը ո՛չ, օրվա քաղաքական կյանքը չէ՛, հայրենիքը հո՛ղն է, ա՛յն հողը, որ մեզի դարեր շարունակ պահած է, և Վազգեն Վեհափառ Հայրապետ 1960 թվականին առավ գավազանը իր ձեռքին՝ փնտրելու արտասահմանի ժողովուրդը: Կհիշեմ, 1960 թվականի մայիսին, երբ ժամանեց Ամերիկա, հետևյալ խոսքը ըսավ. «Եկած եմ Ձեզ փնտրելու, եկած եմ Ձեզ գտնելու», և այդ կերպով ինք եղավ առաջին անգամ ճշմարիտ ոսկի կամուրջ մը հայրենիքի և արտասահմանի միջև: Այսօրվա խանդավառ Սփյուռքը կապված կմնա հայրենիքին: Անցյալի օրերը մեկնեցան, բայց մնաց հողը, անցյալի քաղաքական կյանքը փոխվեցավ, այն, ինչ որ հայուն երազն էր, այսօր ճշմարտություն եղավ, և Հայրապետի մեծագույն ուրախությունը այդ էր: Երջանիկ եղավ Վազգեն Կաթողիկոս վերջին յոթանասուն տարիներու ընթացքին մեր բոլոր Հայրապետներուն մեջ, որ տեսավ իր երկրին ազատությունը. տեսավ ուրույն կառավարություն, տեսավ երկրին դրոշը: Ճիշտ է, որ տարեց-տարի կկորսընցներ իր առողջությունը, կհալեր մոմի մը նման, բայց իր խանդավառ հոգին զինք միշտ առողջ կգտներ: Իր վրա ազդած վիճակներ կային, որ դժվար կվերլուծեր, երբ 1961 թվականին Պոլիս այցելած էր, կըսեր. «Չէի սպասեր այն մեծ խանդավառությունը, մանավանդ այդ երկրին մեջ», և գիտեր, թե ինչ էր իրենց հարաբերությունը մեր երկրին նկատմամբ, ասաց. «Հայը անկարելի է, որ մեռնի»: Փափագն էր կրկին այցելել, վերջին տասը տարիներու ընթացքին միշտ կրկնած էր. «Վնաս չունի»: Իր փափագը մենք կկատարենք: Կհիշեմ, օր մը տասնութ տարիներ առաջ պետք է ըլլար, երբ Վեհարան էինք, և Պոլսո ուխտավորներու խումբ մը եկած էր, այդ ժամանակ ներս մտավ մարշալ Բաղրամյանը, ներկայացուց և ըսավ. «Սրանք բոլորը Պոլսից եկած են, այցելա՞ծ եք Պոլիս»: Բաղրամյանը «ոչ» ըսավ:

— Ձե՞ք փափագեր այցելել:

— Երբ մի օր հրամայե՛ք, այդ ժամանակ կգնամ:

Ի վերջո այսօր և տասը օրեր մենք բոլորս հուզումով մնացինք, բայց մեկ հպարտություն ու ուրախությունը ունենք, և ատիկա անքակտելի է, որ ի վերջո Եկեղեցին և պետությունը, ազգ և Եկեղեցի այսօր ի հայտ բերավ, թե իրարմե անբաժան մասեր են:

Մեր խորին շնորհակալությունը մեր նորահաստատ պետության: Հասատ մնա այս երկիրը, և մենք նույն խանդավառությամբ պահենք այս երկ-

ին բոլոր իղձերը, բոլոր երազները մեր սրտին մեջ և այդ ժամանակ է, որ Վազգեն Վեհափառը մենք ամենքս ապրեցուցած կըլլանք մեր հոգիին մեջ»:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անունից իր սրտառուչ ցավակցությունն է հայտնում ԵՀԽ-ի ատենապետ, գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանը.

«Հուզումնախառն այս պահում աշխարհի չորս ծագերում տարածված և տարբեր մշակույթներու ու ազգերում պատկանող 360 եկեղեցիներ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ճամբով կխոնարհին Վազգեն Ամենայն Հայոց Հայրապետի տակավին թարմ հողակույտին առջև: Անոնք կխոնարհին բարձրագույն աստիճանի հարգանքով շուրջ քառասուն տարիներու եկեղեցաշեն ու եկեղեցանվեր ծառայության առջև: Ամբողջանվեր ծառայություն մը ազգին ու Եկեղեցվո, որ Վազգեն Վեհափառ Հայրապետինը եղավ Էջմիածնի սրբավայրեն ճառագայթող ու մեր Եկեղեցվո, մեր ժողովուրդի կյանքը հարստացնող քրիստոնեական հավատքով ու հոգևոր արժեքներով: Արդարև, հանգուցյալ Վեհափառ Հայրապետին կաթողիկոսական ծառայության մեջ յուրահատուկ դեր ունեցավ Էկումենիզմ անունով բնորոշվող համաքրիստոնեական միջեկեղեցական շարժումը: Ոչ միայն հանգուցյալ Վեհափառը մոտեն հետևեցավ այս շարժումին, այլ հավատաց այդ շարժումին կարևորությանը՝ Հայ Եկեղեցվո, Հայաստանին ու ընդհանրապես հայ ժողովրդին համար: Ու հատկապես 1962-ից հետո, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը անդամ դարձավ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, Վազգեն Վեհափառը քաջալերեց շարունակ, որ այս Աթոռին ներկայացուցիչները բերեն իրենց հետևողական ու գործոն մասնակցությունը միջազգային բարդ ու հարգանք վայելող Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կյանքին ու առաքելության: Երկու առիթներով Վեհափառ Հայրապետը գտնվեցավ Ժնև՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կեդրոնատեղիին մեջ: Զանազան առիթներով ան Էջմիածին հրավիրեց Խորհուրդին հանձնախումբերը, որպեսզի այնտեղ ունենան իրենց ժողովական հանդիպումները, մանավանդ Վազգեն Վեհափառը իր կյանքի վերջին տարիներուն, հակառակ իր հառաջացյալ տարիքին, անձնապես հետևեցավ երկրաշարժեն ասդին ու մինչև օրս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին կողմե Հայաստանին կատարվող օժանդակության զանազան գործնական աշխատանքներուն:

Երկու տարիներ առաջ, երբ Վազգեն Վեհափառը Ժնև կգտնվեր, ինձի՝ մտերմական մեկ զրույցի ընթանքին հետևյալը ըսավ.

— Տղա՛ս, կուզեմ, որ կարելիդ դնես օգտակար ըլլալու համար Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ճամբով մեր հայրենիքին:

Ու ես պատասխանեցի.

— Վեհափա՛ռ, ինձի համար որպես հայ, որպես Հայ Եկեղեցվո սպասավոր, Հայաստանին, հայ ժողովուրդին ու Հայ Եկեղեցվո ծառայելը գոյության իրավունք է, առաջնահերթ պարտավորություն:

Ու սա պահուն Վազգեն Վեհափառ Հայրապետի ոգեղեն ներկայության դիմաց կանգնած կհայտարարեմ, թե Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը գերանորոգ թափով պիտի շարունակե իր օժանդակությունը թե՛ հայրենիքին և թե՛ Ղարաբաղի մեր սիրելի ժողովուրդին:

Այս տխուր առիթով, հանուն Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդին, սրտի պարտքը կկատարեմ հայտնելու իմ խորագոյն ցավակցություններս հանգուցյալ Վեհափառի հոգևոր եղբոր՝ Մեծի Տանն Կիլիկիո Գահակալ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին, Երուսաղեմա Առաքելական Աթոռոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսության Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կ. Պոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանին և Հայ Եկեղեցվո ներկա և բացակա բոլոր սպասավորներուն:

Այս տխուր առիթով նաև իմ խորագոյն ցավակցություններս հանուն Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդին՝ Հայաստանի Հանրապետության Վսեմաշուք նախագահին՝ Պարոն Լևոն Տեր-Պետրոսյանին, Հայաստանի պետության, հայրենի ժողովուրդին և համայն հայ ժողովուրդին: Թող Անտված անսասան ու պայծառ պահե Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որպեսզի ան կարենա շարունակել գերանորոգ հավատքով, տեսիլքով ու հանձնառությամբ, իր ազգաշինությամբ ու հայրենաշինությամբ նվիրական առաքելությունը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի»:

Հանուն Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն Թեոկտիստի, սփոփանքի խոսք ասաց Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Սուրբ Սինոդի քարտուղար Գերաշնորհ Թեոֆան եպիսկոպոս Սինաիտուլը.

«Սիրելի վշտակիր եղբայրներ և քույրեր,

Հայ Առաքելական սգավոր Եկեղեցու ուստրեր և դուստրեր,

Ինչպես Պողոս առաքյալն էր ասում, «եթե մարմնի մի որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում նաև բոլոր անդամները» (Ա. Կորնթ. 12,26): Մենք այս ճշմարտության փորձառությունն իր ամբողջ խորությամբ ապրում ենք այսօր, երբ աշխարհի չորս ծագերից եկել ենք այստեղ՝ դեպի հավիտենություն ճանապարհ դնելու Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինին:

Նորին Ամենապատվություն Թեոկտիստ Պատրիարքի, Ռումին Օրթոդոքս Եկեղեցու բարձրաստիճան հոգևոր պաշտոնյաների, ողջ հոգևորականության ու հավատացյալների անունից և անձամբ իմ անունից թո՛ւյլ տվեք արտահայտել խոր վշտակցության մեր զգացումները Հայաստանյայց Առաքելական սուրբ և սիրելի Եկեղեցուն՝ համազգային վշտի այս պահին, երբ Ամենակարող Տերը, որն իշխում է ժամանակի, մարդկանց և բոլոր արարածների վրա, որոշեց իր մոտ կանչել այդ սուրբ Եկեղեցու Հովվապետին՝ բաժանելով նրան այս աշխարհի անցողիկ բաներից, բնակեցնելու համար երկնային թագավորության մեջ, ուր չկա «ո՛չ վիշտ, ո՛չ ցավ, ո՛չ հառաչանք»:

Այս վերջին 39 տարիների ընթացքում Հայաստանը և աշխարհով մեկ ցրված բոլոր հայերը Նորին Սրբություն Վազգեն Առաջինի քաղցրությամբ ու արժանավորությամբ օծուն անձի մեջ տեսան պատկերը Գերագույն մի Պատրիարքի, որը կարողացավ նույնանալ հայ ժողովրդի հետ նրա տրխրության, ինչպես և ուրախության օրերին, մի ժողովուրդ, որ աշխարհում առաջինը գիտակցեց և հասկացավ, ազգային մակարդակի վրա, թե առանց Քրիստոսի ոչինչ չի կարելի անել:

Ինչպես Բյուզանդական Օրթոդոքս Եկեղեցիները, այնպես էլ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներն համբողջ աշխարհում, հանձին Նորին Սրբության, գտան թանկագին մի հենարան՝ մեկուկես հազարամյակի բաժանումից հետո,

Սուրբ Հոգու միավորող զորության շնորհիվ իրենց ձգտման մեջ հասնելու այն գիտակցության, թե իրենք պատկանում են Քրիստոսի նույն խորհրդական մարմնին՝ «Մեկ, Ընդհանրական, Առաքելական և Սուրբ» Եկեղեցուն:

Ռումինիայի մայրաքաղաքը, որտեղ Նորին Սրբությունը ծնվեց 1908 թվականի սեպտեմբերի 20-ին, Բուխարեստի համալսարանը, որտեղ հանգուցյալ Հայրապետն ստացել էր աստվածաբանության, գրականության և փիլիսոփայության իր բարձրագույն վկայականները, ամբողջ ռումին ժողովուրդը, որի ծոցում նա ապրեց մինչև 47 տարեկան հասակը, բոլորն էլ Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անձի մեջ գնահատեցին և մեծարեցին թանկագին ու ազնվահոգի մի բարեկամի:

Նորին Սրբությունը հեռացավ այս աշխարհի վաղանցուկ բաներից: Բայց մենք թույլ չտանք, որ տխրությունը ճնշի մեր հոգիները, «ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն» (Ա. Թեսաղ. 4,13): Մենք համոզված ենք, որ մեր Տերը՝ Քրիստոս, որին Նորին Սրբությունը ծառայեց իր ամբողջ կյանքում այնքան անձնվիրությամբ, նրան կշնորհի իր արժանի տեղը Արդարների մեջ, և նա վերևից, Գերագույն Դատավորի մոտից կաղոթի հայ ժողովրդի համար, որին արժանավորապես առաջնորդեց երկար տարիներ, կաղոթի նաև ռումին ժողովրդի համար, որին այնքան սիրեց և որի ուրախություններն ու ցավերը կիսեց շուրջ կես դար, վերջապես կաղոթի ամբողջ աշխարհի մարդկանց համար, որոնք այնքան կարիք ունեն հավատի ճշմարտությանն ի Քրիստոս:

Թող Աստված Նորին Սրբությանը շնորհի հավերժական հանգիստ»:

Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսության Կենտրոնական Վարչության և Լիբանանի Խորհրդարանի ու վարչապետի անունից արտի խոսք ասաց մեթր Խաչիկ Պապիկյանը.

«Մեր այսօրվա հոգեճաշի հավաքույթին, որ հայրենի մեր սիրելի ժողովուրդին սովորություններում մեջ, սիրո և հարգանքի ամենագեղեցիկ արտահայտություններեն մեկն է, այս առտվա հոգեպարար արարողություններեն ետք թույլ տվեք, Վեհափառ Տեր, որ հանուն Կիլիկիո Սուրբ Աթոռի Կենդրոնական Վարչության, Ձերդ Վեհափառության, Հայաստանի Հանրապետության Վսեմաշուք Նախագահ Պարոն Լևոն Տեր-Պետրոսյանի և իր կառավարության անդամներում, համայն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո, եկեղեցական և աշխարհական սպասավորներում ներկայացնեմ մեր հոգեսպաս ցավակցությունները: Աստված անմահ պահե Վեհափառ Հայրապետի սուրբ հիշատակը: Ինք, որ ականատես եղավ, ապրեցավ արդի ժամանակներու ամենացնցում դեպքերը՝ ի շահ մեր Հայաստանյայց ազգի, ի շահ մեր Սուրբ Եկեղեցվո: Աստված Ձեզ, Վեհափառ Տեր, և մեր ղեկավարներում երկար կյանք պարգևե և թող Ամենայն Հայոց Սրբազան Կաթողիկոս Վազգեն Ա-ի հիշատակը անմահ պահե»:

Ցավակցական և սփոփանքի խոսք ասացին նաև Գերաշնորհ Պիեռ Դյուբրե եպիսկոպոսը՝ հանուն Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի, միտրոպոլիտ Բիշոյը՝ հանուն Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն Ամբա Շընուդա Գ-ի, և Գերաշնորհ Ջոն Դենիս եպիսկոպոսը՝ հանուն Քենթրբերիի

Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Ջորջ Կարեյի:

Վերջում ներկաներին իր շնորհակալության և օրհնության խոսքն ասաց Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Հոգեճաշն ավարտվում է համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն Իլիա Բ-ի աղոթքով՝ ի նշան Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անխորտակելի սիրո ու միության Ընդհանրական Եկեղեցու հանդեպ:

ՅՈԹՆՕՐԵՔԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 3-ին, ժամը 12.00-ին, Մայր Աթոռի միաբանները, հոգևոր ճեմարանի ուսանողները, հանդիսադրությամբ Կաթողիկոսական Տեղապահ Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանի, Վեհարանից թափորով առաջնորդվում են դեպի Վեհափառ Հայրապետի հողադամբարան՝ յոթնօրեքի հոգեհանգստյան պաշտոն կատարելու: Ըստ կարգաց հայրերի սաղմոսների, հոգեթով շարականների երգեցողությամբ և աղոթքների ընթերցմամբ: Եկեղեցու սպասավորներն ու հավատացյալ ժողովուրդը խնդրանք և աղերս հղեցին առ Ամենաբարձրյալը, որպեսզի Տերը հավիտենական հանգստով խաղաղեցնի և սփոփի Ազգիս Հովվապետի ալեկոծյալ և ալեբախված հոգին՝ դասելով նրան և շարս սրբոց հայրապետաց, վարդապետաց և քահանայից:

Հավարտ հոգեհանգստյան պաշտոնի, դամբանական քարոզով հանդես եկավ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանը.

«Հավատացյալ ժողովուրդ,

Յոթնօրեքի այս հոգեհանգստյան պաշտամունքը կատարեցինք մեր սիրելի Հայրապետի հողադամբանին առջև: Նա այս տունին բնակիչն էր և հայրն էր: Նրա հոգին իր հավիտենական կայքը վերադարձավ, և ամեն անգամ, որ կքայլենք Մայրավանքի այս շրջափակին մեջ, անպայման պիտի հիշենք իրեն ներկայությունը ամեն տոնական օրերին, իրեն՝ թափորով Սբ. տաճար մտնելը, պատարագին ներկա լինելը, իր խոսելը և քարոզելը, իր հայրենասիրությունն ու շունչը: Իսկ մարմինը հանգչել է այստեղ: Այդ մարմինը տառապեց վերջին տարիներին, սակայն այն հոգին, որ իրենն էր, այդ մարմնի տառապանքեն երբեք չընկճեց: Եվ սա մեզի համար դաս է, որ երբեք թույլ չտանք մեր ֆիզիկական տկարությունները, հիվանդությունները, նեղությունները մեր հոգին ընկճեն: Եվ նրա այդ տառապագործ մարմինը այստեղ է: Նորից ամեն անգամ, որ անցնենք այս կողմերից, պիտի մեր աչքերը իրեն դառնան, զինքը պետք է հիշենք և ասենք. «Ասված հոգիդ լուսավորի, Վեհափառ Հայրապետ»:

Վաղը, պատարագից հետո, պիտի գանք այստեղ և հոգեհանգստյան պաշտոն կատարենք, որից հետո քառասունքին նորից պատարագ և հոգեհանգստյան կարգը պիտի կատարվի:

Ամեն մեր աղոթքներու մեջ հիշենք այն հոգին, որ մեր Հայրը եղավ, հիշենք այն հոգին, որ մեր Հայրապետը եղավ, աշխարհով ցրված մեր հայության մի տեսակ գլուխը, ներկայացուցիչը, ներշնչումը եղավ 40 տարի-